

ԵՐԱԺԺԻՇՏ



Երևանի Կոմիտասի անվան
պետական կոնսերվատորիա

Yerevan Komitas
State Conservatory

Ереванская государственная
консерватория им.Комитаса

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (225)

#9 սեպտեմբեր 2024

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 33-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ



ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՆԵՐ ԶԻ ՃԱՆԱԶՈՒՄ



Ֆրանսիական՝ «COFO» և «Միփան Կոմիտաս» երգչախմբեր, «Փարոս» կամերային երգչախումբ,
Ա. Տիգրանյանի անվ. երաժշտական դպրոցի երգչախումբ, Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և
բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախումբ,
դիրիժոր Բաֆֆի Միրայելյան

3

ԲԱԼԵՏԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԸ Էդգար Հովհաննիսյանի «Անտոնի» բալետի պրեմիերայի առիթմով



Հարված «Անտոնի» բալետից

5



2

ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՅԻՆԵՐԻ ՆՈՐԱՄՈՒՏԸ


ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՑՎԵՅ ԿՈՄԻՏԱՍԻ ԾՆԵԴՅԱՆ 155-ԱՄՅԱԿԻՆ



ԵՊԿ ռեկտորի պաշտոնակատար
Ծովինար Մովսիսյանը, ԵՊԿ
դասախոսները և ուսանողները ծաղիկներ
են խոնարհում Կոմիտասի
շիրիմին

4

«Հ ԳԱՄ-ՈՒՄ ՏԵՂԷ Է ՈՒՆԵՅՆԷԼ «ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ - 100» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ»



6

Առաջին կուրսեցիների նորամուտը



Ծովինար Մովսիսյան



Արամ Հովհաննիսյան



Իրինա Հակոբյան, Կարինե Օհանյան



Ռուբեն Ասատրյան



Ռուբեն Ասատրյան



Ուսանողական խորհրդի նախագահ՝ Նարեկ Խաչատրյան, ԵՊԿ ղեկավար՝ Իրինա Հակոբյան, ԵՊԿ ամբիոնի վարիչներ՝ Կարինե Օհանյան, Նարինե Զարիֆյան, Գայանե Մուրադյան

Մեկնարկեց 2024-2025 թթ. ուսումնական տարին: ԵՊԿ ուսանողները ջերմությամբ, սիրով ու մեծ սպասելիքներով են եկել իրենց կրթության օջախ: Նրանց ողջունեցին ԵՊԿ ղեկավարը, հանձինս ղեկավարի պաշտոնակատար՝ Ծովինար Մովսիսյանի, ով բարի երթ մաղթեց բոլորին, ինչպես նաև դասախոսներին: Ողջույնի խոսքով հանդես եկան նաև ուսումնական գծով պրոռեկտոր՝ Արամ Հովհաննիսյանը, Վոկալ-տեսական ֆակուլտետի ղեկավար՝ Ռուբեն Ասատրյանը, Նվագախմբային ֆակուլտետի ղեկավար՝ Ռուբեն Մանասյանը, դաշնամուրային ֆակուլտետի ղեկավար Իրինա Հակոբյանը, ներկա էին ամբիոնի վարիչներ՝ Գայանե Մուրադյանը, Նարինե Զարիֆյանը և պրոֆեսորներ՝ Կոմարգիտոր Արգաս Ոսկանյանը, դասախոսներ և հյուրեր:



Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՅՈՑՅԱՆԸ

Հանդիպում 1-ին կուրսեցիների հետ

Սեպտեմբերի 11-ին կայացավ առաջին կուրսեցիների առաջին հանդիպումը ԵՊԿ ղեկավարատի ներկայացուցիչների հետ: Ուսանողական խորհրդի նախագահ Ծովինար Մովսիսյանը հորդորեց ծանոթանալ ԵՊԿ ուսանողների իրավունքներին և պարտականություններին: Հույս հայտնեց, որ ուսանողական տարիները լինեն վառ տպավորություններով լեցուն: Նշեց. «Հիշե՛ք՝ դուք եր ձեր առօրյան կազմակերպում: Մեր քաղաքի թանգարանները, ցուցահանդեսներն արդյունավետ ապրելու ամփոփարիների հնարավորություն են: Բոլոր նախաձեռնությունները կունենան աջակցություն. կօգնեն Ուսիտրիտորը, Ուսանողների հարցերով ղեկավարի խորհրդականը, ղեկավարները, ամբիոնների աշխատակազմը: Զեր ակրիվությունը կարևոր է ձեր ապագայի ցանկացած առաջընթացի համար»:

Ուսումնական գծով և Միջազգային համագործակցության և Հանրային կապերի գծով պրոռեկտոր Արամ Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ Միջազգային շարժունության ծրագրերով ԵՊԿ-ն համագործակցում է արտերկրի 10-ից ավելի կրթօջախների հետ. հիմնականում ներկայացվում են բակալավրականի 2-րդ, 3-րդ և մագիստրոսականի 1-ին կուրսի ուսանողները, հաստատման համար առաջնային պահանջներից է օտար լեզվի տիրապետումը: Հիշեցրեց, որ բակալավրիատում ուսման ընթացքում կարող են միայն երկու անգամ փոխել մասնագիտության դասարանի ղեկավարին: Ֆինանսատնտեսական գծով պրո-



Արամ Հովհաննիսյան, Ծովինար Մովսիսյան



Իրինա Հակոբյան

ռեկտոր Քրիստինե Մեյնարյանը հայտնեց, որ ուսանողական և ստուգման գրքույկները կտրվեն սեպտեմբերի ավարտին: Համաձայն կառավարության որոշման, ՀՀ բուհերի առաջին կուրսի ուսանողները չեն ստանում կրթաթոշակ: Հիշեցրեց, որ կոնսերվատորիայում գործում են անվանական կրթաթոշակներ: Նկատեց, որ առաջին կիսամյակի ուսման առաջադիմության արդյունքում միայն երկրորդ կիսամյակից կարող են դիմել գեղեցիկ հարցերով զբաղվող հանձնաժողովին:

Որակի բաժնի պատասխանատու Նարինե Ավետիսյանը հիշեցրեց, որ ուսումնական բոլոր հարցերը առաջին հերթին պետք է ուղղել համապատասխան ղեկավար, ընդգծեց՝ կարևոր է ծանոթանալ Կարգապահական կանոններին, տեղեկացրեց բուհում գործող Էթիկայի հանձնաժողովի դիմելու հնարավորության մասին: Նկատեց, որ պարբերաբար կազմակերպվելու են հարցումներ, և շատ կարևոր է ակտիվացնել կոնսերվատորիական էլեկտրոնային հասցեները:

Եզրափակելով, ղեկավարի պաշտոնակատար Ծովինար Մովսիսյանը նշեց, որ ԵՊԿ-ն, ինչպես և հայաստանյան բոլոր պետական բուհերը ապաքաղաքական կառույց է, յուրաքանչյուր ոք կարող է ունենալ սեփական քաղաքական, կրոնական, կուսակցական նախապաշարմունքներ, ակտիվ մասնակցել երկրի քաղաքական և այլ իրադարձություններին, սակայն այդ ամենը պետք է լինի բուհից դուրս, ոչ ուսումնական ժամի հաշվին:



<https://www.facebook.com/YerevanStateConsevatory>

Հարգանքի փուրք մատուցվեց Կոմիտասի ծննդյան 155-ամյակին



Հոգևորականության կարգ
Կոմիտասի շիրիմին



Երեխաները
ծաղիկներ
խոնարհեցին
Կոմիտասի շիրիմին



Ծ. Մովսիսյան, Ն. Աթանասյան, Դ. Ղազարյան,
Լ. Սահակյան



«Գեղարդ» երգեցիկ խումբ, խմբավար Մանուկ Պապայան



Սեպտեմբերի 26-ին, Կոմիտասի անվան գրոսայգու պանթեոնում հարգանքի փուրք մատուցվեց Կոմիտասի ծննդյան 155-ամյակի առիթով: ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Սողոմոնյանը, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի աշխատակազմը, արվեստագետներ, ծաղիկներ խոնարհեցին Վարդապետի շիրիմին, պանթեոնում անցկացվեց նաև հոգևորականության կարգ: Հարգանքի փուրք մատուցեցին նաև ԵՊԿ ռեկտորատի, դասախոսների, աշխատակիցների և ուսանողների:

Սերդ անմիտ արով
բոցորեցին,
Բնոյ խառն արով խոցորեցին.
Երկրիդ հողէն խաչդ բուսաւ,
Կեանքիդ կողէն աչդ հիսաւ.
ԿՈՍԻՏԱՍ

Գարյան կարգ: Հարգանքի փուրք մատուցեցին նաև ԵՊԿ ռեկտորատի, դասախոսների, աշխատակիցների և ուսանողների:

Դրան հաջորդեց «Փարիզյան հանդիպումներ» խորագիրը կրող ժամանակավոր ցուցահանդեսի բացումը Կոմիտասի թանգարան-ինստիտուտում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ և ֆինանսավորմամբ: Ցուցահանդեսը նվիրված էր հայ դաշնակահարուհի, երգչուհի, երաժշտագետ, մանկավարժ, Կոմիտաս վարդապետի մրերին բարեկամ Մարգարիտ Բաբայանի ծննդյան 150-ամյակին:



Դանիել Երաժիշտ

Կոմիտասի ծննդյան 155-ամյակին

Կոմիտասը հատուկ ուշադրություն էր դարձնում կին երաժիշտների ուսումնառությանը, նրանց կատարողական հմտությունների զարգացմանը և երկացանկի կատարելագործմանը

Շարունակվում են Կոմիտաս հանճարի ծննդյան 155-ամյակին նվիրված միջոցառումները ոչ միայն մեզ մոտ, այլ արտասահմանում: Վիեննայի Էթնոերաժշտագիտության և կատարողական արվեստների համալսարանում հոկտեմբերի 7-ին, 8-ին տեղի է ունենալու Վարդապետի հոբելյանին նվիրված միջազգային գիտաժողով, որին հրավիրված է կոմիտասագետ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտագիտության պատմության ամբիոնի վարիչ Լուսինե Սահակյանը: Թվում է, թե Կոմիտասի գործունեությունն այնքան շատ է ուսումնասիրված, որ իր մասին ամեն ինչ հայտնի է և հազիվ թե հնարավոր լինի մի նոր փոքրիշատե արժեքավոր փաստ գտնել, որ գիտական արժեք ներկայացնի և նոր լույս սփռի առանց այն էլ չափազանց մեծ ընդգրկում ունեցող հանճարի գործունեության վրա: Այնուամենայնիվ նոր փաստը կա, որը ոչ միայն երաժշտագիտական արժեք է, այլ այն անսովոր է հոգևոր ծառայություն իրականացնող անձի տեսանկյունից: Դա կարծես թե խոսք է՝ ուղղված հայոց օրիորդներին, գուցե հորդոր կամ պատգամ: Այս առիթով խոսք խնդրեցինք մեր գրուցակցից՝ տիկին Սահակյանից: Ներկայացնում ենք այն առանց միջամտության:

«Հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտաս Վարդապետի բազմաթիվ գործունեության մի հետաքրքիր և կարևոր էջ կապված է երաժշտական մանկավարժության, մասնավորապես, հայ կանանց երաժշտական կրթության ու դաստիարակության հարցերի հետ: Հայ իրականության մեջ առանձնահատուկ է եղել Կոմիտաս Վարդապետի դերը, ով կարևորում էր օրիորդ-աշակերտուհիների համակարգված կրթության հարցերը, առհասարակ արվեստագետ կնոջ իրավահավասարության հարցերը: Ինչպես էր մտրեմում Կոմիտաս Վարդապետը հայ կանանց լուսավորության հարցերին: Եվրոպայում կրթություն ստացած Կոմիտասի համար անընդունելի էին հայկական իրականության մեջ արմատավորված հեռադիմական մտրեցումները, կապված, մասնավորապես արեղծագործող կանանց ազատության և իրավունքների հետ: Կնոջ դերը հաճախ ասանակավորվում էր կենցաղի, փնային հոգսերի և երեխաների դաստիարակության հարցերում: Իսկ Կոմիտասը ծրագրում էր բացել կոնսերվատորիա, որտեղ երաժշտական կրթություն պետք է ստանային նաև հայ օրիորդները: Կոմիտասյան կոնսերվատորիայի ծրագրի մեջ կային կետեր, որոնք այսօր էլ զարմացնում են իրենց առաջադիմական, միջազգային չափանիշներով. Կոնսերվատորիայում դասավանդելու համար Եվրոպայից բանիմաց դասախոսներ պետք է հրավիրվեին, աշակերտները սովորելու էին առանց վարձի, փրվելու էր թոշակ և կարիքավորներին սպորտային հնարավորություն: Աճի ընկնող ուսանողներին, անկախ սեռից, որոշվում էր ուղարկել Եվրոպա, այնպես որ երաժշտականություն կարարելագործվելու համար: Վարդապետի համերգային գործունեության մեջ, իր կողմից կազմած երգչախմբերում մշտապես ընդգրկվում էին կանայք, ինչն իր ապրած ժամանակներում համարվում էր արեղծագործական նորարարություն ու խիզախում: Օսմանյան

կայսրության փարածքում, մինչև 1915 թվական, գործում էին բազմաթիվ օրիորդաց վարժարաններ և դպրոցներ: Կոմիտասը դասախոսություններ էր կարդում այդ կրթօջախներում: Հավաքագրում էր շնորհալի աշակերտուհիներին, կազմակերպում նրանց ուսուցման շարունակությունը՝ Եվրոպայում: Կոմիտաս Վարդապետը փորձում էր մի շարք լուսավորական ծրագրեր իրականացնել, առաջին անգամ երգեր ձայնագրելով հենց գեղջուկ կանանց շրջանում, ինչը մեծ խիզախում էր հոգևորականի համար: Նա կանացի երգեցողությունը համարում էր ավելի բնական և մաքուր: Կոմիտասի առաջադիմական ծրագրերն ավելի են ամրապնդվում նրա՝ Փարիզ առաջին ուղևորությունից հետո: Փարիզում Կոմիտաս Վարդապետն աշխատում էր Կոլոն ու Լամյոնո երգչախմբի անդամների հետ: Փարիզում, Հռոմում, Շվեյցարիայի քաղաքներում Կոմիտասը առնչվում էր անվանի կոմպոզիտորների, տեսաբանների և երաժիշտների-կատարողների հետ: Իր եվրոպական համերգների մշտական ուղեկիցներն էին Մարգարիտ և Շուշանիկ Բաբայան քույրերը: 1905 թվականին, Թիֆլիսի Հովհաննիս օրիորդաց դպրոցում Կոմիտասը դասախոսություն է կարդում հայ հոգևոր և ժողովրդական երաժշտության մասին, ինչպես նաև օրիորդներին որոշ չափով լուսարանում է Վագների արվեստի առաջադիմական գաղափարները: 1906-1907 թվականներին, Եվրոպայում ծավալված գործունեության ընթացքում, Կոմիտասը հմրաձայնում երկսեռ երգչախմբի գեղարվեստական և արտահայտչական հարուստ հնարավորությունների մեջ, խորապես զգալով կանացի ձայների առավելությունները, ավելի էր համոզվում երկսեռ երգչախումբ արեղծելու իր ծրագրերի մեջ: Մեռուշ, պետք է առանձնացնել Կ. Պոլսի շրջանը, Վարդապետի կյանքի շրջափուլերից, թերևս, ամենաբից ուսումնասիրվածը Կոմիտաս Վարդապետի գիտակցական կյանքի վերջին շրջանն է, ընդ որում, իրադարձություններով և դեպքերով հարուստ փուլերը (1910-1915թթ.) և ինչպես այդտեղ էին Վարդապետի ժամանակակիցները, Պոլիսը՝ Վարդապետի արեղծագործական վերելքի շրջան էր: Կոմիտասի գործունեությունը Էսայան, Պերպետյան և Կեղրոնական վարժարանում, նրա՝ իրեն Վարդապետի ծառայությունը Պոլսի Ս. Երրորդություն եկեղեցում, հիմնականում հայ շնորհաշար պարանիների ու աղջիկների հավաքագրումն էր՝ երաժշտականության համար: «Ժգակն սեռի մեջ բաղձալի շարժում նկարելով դեպի կրթական ու մշակութային կյանքը», մի առանձնահատուկ գոհունակությամբ էր Կոմիտաս Վարդապետը Աղաբազարի Գայանյան օրիորդաց վարժարանում դասախոսություն կարդում և համերգ տալիս: 1910-ին Պոլսի «Պրի Շանի» Ձմեռային թատրոնի «Գուսան» 300 հոգանոց երգչախմբի համերգին ընդգրկված էին նաև աղջնակներ, ինչն աննախադեպ էր Պոլսի հայ իրականության մեջ: Կոմիտաս Վարդապետի մանկավարժական և լուսավորական գործունեությունն ավելի շարժում էր կանանց կատարողական, հմրությունների զարգացմանը, համերգային կյանքին նախապարտադրելուն, նույնիսկ աղջիկ երաժիշտ-մանկավարժներ էր փորձում պարարտագրել գաղափարների համար: Վարդապետը կարևորում էր օրիորդ-աշակերտուհիների համակարգված կրթության հարցերը, նրանց երկացանկն ընդլայնելով հարուկ ուշադրությամբ, գեղարվեստի ծառայելու բարձր նպատակի համար: Փարիզյան երգչուհի Մարգարիտ Բաբայանի հետ Կոմիտասի նամակագրու-

թյան ընթացքում հարավաճը համերգային, կրթական կամ հրապարակական հարցերի քննարկում է: 1911թ. Ալեքսանդրիայից Մ. Բաբայանին ուղղված նամակներից մեկում Վարդապետը բարեխոսում է Պոլսեցի, լավ ընթանիքից մի օրիորդի համար, ով «դաշնակահար դառնալու արդեն մեծ վարժություն ունի, ընդհանր լսողություն, կիրթ ձայն, բայց պակասում է երաժշտական զարգացումն ու պաշարը»: 1905-06 թվականներից սկսած Կոմիտաս Վարդապետը սկսում է պիեսներ գրել դաշնամուրի համար: Օրինակ, «Մանկական նվագներից» Փափուրին գրված է իր աշակերտուհի Մանինե Մեխրյանի համար: Իր շնորհալի աշակերտուհի օրիորդ Մարինա Սրամպուրյանին հասցեագրած նամակը սկսում է «Ողջուն Ձեր նոր կյանքին» փողովով, որն այսօր թնավոր խոսքի նշանակություն է ձեռք բերել: Իր Մանինե ուսանողուհուն է, որ հայ փիլիսոփա Շահան Պերպետյանի դուստրն էր, ուղում էր «հայկական գեղջուկ-երգչական հնչյունները սովորեցնել», իսկ Իսկուհի Ղալանդեանին քննադատում էր իրեն երգի մեջ չխորացող երգչուհու: Ուղում էր, լավ ձայնով ու կիրթ եղիպարահայտուհի Հրանտ Փոլադին «փրկել ապիկար ուսուցիչներից» և Փարիզ ուղարկել, որ ձայնն ավելի լավ մշակի: Մեկ այլ, 1912 թվականին Կ. Պոլսից գրած նամակում, Վարդապետը իր երգչախումբ եկած մի հայ աղջկա մասին է գրում, որի ձայնի մաքրությունն ու գեղեցկությունն իրեն հիացրել էին, բայց ավանդական ընթանիքի օրենքները՝ հիասթափեցրել: Նվիրումի շարքի վոկալ արեղծագործությունների մասին, նրա «Գարուն» երգի լավագույն փարբերակը նվիրված է Մարգարիտ Բաբայանին (1907 թիվ), «Երանգին» Կոմիտաս Վարդապետը նվիրել է Շնորհաշար, մասնավորապես լավ պարել իմացող օրիորդ Գայանե Ենգիբարյանին (բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի ազգականուհին է): Վարդապետի աշակերտուհիների հուշագրությունները, նամակաւին, ինչպես նաև երաժշտական բազմաթիվ արեղծագործություններ այն իրողության վկայությունն են, որ Կոմիտասը հարուկ ուշադրություն էր դարձնում կին երաժիշտների ուսումնառությանը, նրանց կատարողական հմրությունների զարգացմանը և երկացանկի կատարելագործմանը: Ցավոք, Կոմիտաս Վարդապետը հիմնականում զբաղվել է օրիորդների կատարողական հմրությունների հարցերով, բայց ոչ կոմպոզիտորության հարցերով», – հայտնեց Լուսինե Սահակյանը:



Լուսինե Սահակյան

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

https://www.aravot.am/2024/09/25/1445159/?fbclid=IwY2xjawFyKFZleHRuA2FibQIcMQABHbUis4YW2qz63-2QxrAitS4VDIQoJSRBUoi4aWP6CRZosUEDEFCbfMA_aem_b_e0IsGr6WF0hZca1NQ8Tg

== ԲԱԼԵՏԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԸ

Էդգար Հովհաննիսյանի «Անտունի» բալետի պրեմիերայի առիթով

1 Բալետն իր ստեղծումից ավելի քան հինգ տասնամյակ անց վերաբեմադրվեց Մայր թատրոնի բեմում: Այդ իրադարձության իրականացմանն իրենց գործուն աջակցությունը ցուցաբերեցին Կոմիտաս ինստիտուտ-թանգարանը և, իհարկե, թատրոնի տնօրինությունը, ի դեմս գլխավոր դիրիժոր Կարեն Դուրգարյանի: 2024 թվականի Սեպտեմբերի 26-ին, Մեծն Կոմիտասի ծննդյան 155-ամյակի օրը կայացավ վերաբեմադրված բալետի այնքան սպասված պրեմիերան: Խորհրդանշական էր, որ հանգամանքների բերումով այս բեմականացումն իրականացվեց հեղինակների գավակների գործուն աջակցությամբ և մասնակցությամբ՝ պարուսույց Մուսաննա Մարտիրոսյան, նկարիչ Նարեկ Ավետիսյան, զգեստների նկարիչ Ռուբինա Հովհաննիսյան: Եվ թերևս սա է պատճառը, որ բեմադրության մեջ առավելագույնս պահպանվել էին հեղինակների մտահղացումները, սակայն նորովի, գունեղ, թարմ ու անկեղծ հուզականությամբ: Մինասի տաք ու արևվառ գույներով ձևավորումը նորովի էր շնչում անիմացիոն տեխնիկական հնարքների կիրառմամբ, Ռուբինա Հովհաննիսյանի և Ռոբերտ Էլիբեկյանի զգեստները ներդաշնակ գույադրումներով լրացնում էին հերոսների կերպարներն ու հոգեվիճակները՝ դառնալով բեմի դիտաշարի բնական շարունակությունը: Տպավորիչ էր գլխավոր դերակատարների (Անտունի՝ Սևակ Ավետիսյան, Խումար՝ Անահիտ Վասիլյան) բեմախաղը: Բալետի մտահղացման ամենաբարդ և ամենահամարձակ գաղափարը գլխավոր հերոսի՝ Անտունու բազմաշերտ կերպարն է, որը պարի, պլաստիկայի, մնջախաղի խորհրդանիշների լեզվով ոչ թե սովորական մի մարդու մարմնավորում է, այլ ինքը՝ Կոմիտասն է: Ժամանակին այդ գեղարվեստական խնդիրը հրաշալի իրագործեց Վիլեն Գալստյանը: Ներկայիս բեմադրության բալետմաստերը՝ Ռուբեն Մուրադյանը կարողացավ պահպանել այն նուրբ սահմանը, որը բալետի լեզուն կապում է բեմական խաղի, մնջախաղի ու պլաստիկայի հետ՝ առավելագույնս դրսևորելով հերոսի հուզական կերպավորումները:

Սակայն, այս ամենի գագաթնակետը Էդգար Հովհաննիսյանի անկրկնելի երաժշտությունն է: Հիմքում պահպանելով կոմիտասյան մեղեդիների բյուրեղյա անադարտությունը՝ կոմպոզիտորը դրանք մեկնաբանել է իրեն հատուկ էպիկական սիմֆոնիզմի հուժկու հզորությամբ ու հարուստ բազմերանգությամբ: Հենց այդպես կարող էր հնչել Կոմիտասը, եթե գրեր սիմֆոնիկ նվագախմբի համար, այդ ներքին դինամիզմն ու ոգեղեն ուժը հորդում է հովհաննիսյանական նվագախմբից: Գլխավոր դիրիժորի՝ Կարեն Դուրգարյանի մեկնաբանությամբ նվագախումբը հնչեց համոզիչ ու լիահունչ էր

Մեկ այլ կարևորագույն բաղադրիչը երգչախումբն է, որի ներմուծումը երաժշտաթատերական ժանրում կոմպոզիտորի համարձակ նորարարություններից էր, և դրանում դրսևորվեց XX դարի երաժշտության գլխավոր միտումներից մեկը՝ ժանրերի սինթեզը: Սակայն, ինչպես և շատ այլ դեպքերում, Էդգար Հովհաննիսյանի համար դա գուտ ժամանակակից հնարքներով հրապուրվածության արդյունք չէ, այլ խորապես վերապրված և, որ ամենակարևորն է՝ գեղարվեստական գերխնդիրն ծառայող ստեղծագործական հնարք, որով երգչախումբը նվագախմբայի պարտիտուրի ուրույն երանգը լինելուց բացի, դառնում է բալետային գործողության անմիջական մասնակիցը, մեկնաբանում է հերոսների հույզերն ու ապրումները, հանդես

է գալիս ժողովրդի ընդհանրացված կերպարի դերում: Այստեղ տեղին է առանձնահատուկ նշել թատրոնի երգչախմբի (գլխավոր խմբավար՝ Նարինե Ոսկանյան) բարձրակարգ դերակատարումը: Ի սկզբանե, հեղինակային մտահղացմամբ, երկու երգչախմբերը, որոնք տեղավորված էին բեմի աջ և ձախ խորաններում, ասես փոքր-ինչ վերացարկված, մասնակցում էին բեմական գործողությանը: Ժամանակին այս հնարքը ամենացնցող տպավորություն էր գործել թե՛ մասնագետների և թե՛ երաժշտասեր հասարակայնության վրա: Բալետի նոր բեմականացման հեղինակ-



Հարված «Անտունի» բալետից

ները առավել ընդգծեցին երգչախմբի կարևորությունը: Երգչախմբի մի մասը տեղավորված է նվագախմբի «փոստում»: Սրանով դրսևորվում է երգչախմբի, որպես նվագախմբի ինքնուրույն շերտի, ինքնուրույն տների գործառնությունը: Մյուս երգչախումբը ամբողջ երկրորդ գործողության ընթացքում բեմի վրա է, որպես իրադարձությունների գործուն մասնակից, պարային, մնջախաղային շարժումներով միախառնվելով կորդե-բալետին: Երգչախմբի նման «երկփեղկման» արդյունքում երգչախմբային հնչողության ներսում գոյանում են տարբեր հնչողություններ՝ գուտ վոկալ հնչողությունից մինչև գործիքային, աղմուկների, ձայնարկումների սոնորիստական հնարքներից մինչև լռակյաց մնջախաղ:

Երկրորդ գործողությունը, որը կոմպոզիտորն անվանել է «Ռեքվիեմ», բալետի գաղափարական կիզակետն է,

սակայն հոգեհանգստյան ծիսերգության ողբերգականության հետ մեկտեղ, ճառագում է Էդգար Հովհաննիսյանի կենսահաստատ լուսերգությամբ, ապացուցելով, որ բալետն այսօր էլ հնչում է թարմ ու արդիական: Ողջունելով «Անտունի» բալետի հին ու նոր հեղինակներին փայլուն պրեմիերայի առիթով կցանկանայինք նշել, որ Ազգային բալետի այս բացառիկ նմուշը կարող է և պետք է լինի մեր թատրոնի խաղացանկի առանցքային ստեղծագործություններից մեկը:

ԾՈՒՎԻՆԱՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու, դոցենտ
ԵՊԿ ռեկտորի պաշտոնակատար

Не жалея

Как сказал великий гений,
“Все, что отдал — все твое.
Что не отдал — потерял навеки,
Не жалея — и будет хорошо”.

Душа

Душа - прекрасная как праздник,
Душа - прелестная как сон.
Там много света, много счастья,
Любви немеркнувший огонь!

Рождение

Без зла не знаешь сладости любви,
Без муки — облегчения не жди.
Чтобы родить — нам мучиться зарок,
Будь ты мужчина, женщина иль Бог!

Поэт


Поэт имеет право плакать,
Есть у него еще слова.
Нет разницы — муж или дева,
Он прежде Сердце и Душа!

Цена слова
(посвящается В. С. Высоцкому)

Цена слова — капля крови,
Клетка нерва, жизни миг.
Сердца боль, отравы, горечь,
И страдание, и крик.
Можно быть живым, но мертвым,
Можно и наоборот.
Все зависит от тебя лишь,
Как пройдешь, куда придешь.
Слово даром не дается,
Слово мукою полно.
Коль виновен, ты не бойся,
Все равно сожрет ОНО!

АРКАДИЙ МАРТИРОСЯН
Оперный певец

Կայացավ կոմպոզիտոր Գեղունի Չթյանի հորեղյանին նվիրված համերգը



Հայաստանի կոմպոզիտորների միության նախաձեռնությամբ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ սեպտեմբերի 9-ին, Կամերային երաժշտության տանը մեկնարկեց Հայ ժամանակակից երաժշտության 8-րդ փառատոնի երկրորդ՝ աշնանային համերգաշարը և այն սկսվեց ՀՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր, մանկավարժ Գեղունի Չթյանի հորեղյանին նվիրված համերգով։

Անվանի կոմպոզիտորին նվիրված համերգի ընթացքում հնչեցին հեղինակի՝ Արամ Խաչատրյանին նվիրված կամերային Սիմֆոնիան՝ Հայաստանի պետական կամերային նվագախմբի կատարմամբ (ղեկիժը՝ Գրիգոր Առաքելյան), ինչպես նաև երկու ռոմանս («Երգ Հիշատակի» խոսք՝ Յուրի Սահակյանի և «Գարունդ հայերեն է գալու» խոսք՝ Համո Սահյանի)՝ սոպրանոյի և դաշնամուրի համար՝ ՀՀ վաստակավոր արտիստ, սոպրանո Աննա Մայիսյանի և Էլեն Կիրակոսյանի (դաշնամուր) կատարմամբ։

Համերգի երկրորդ բաժնում Հայաստանի պետական կամերային նվագախմբը կատարեց հայ ժամանակակից կոմպոզիտորներ՝ Ժիրայր Խաչիրյանյանի «Մերենադ», Աշոտ Ղազարյանի «Երաժշտություն հ. 3», Իրինա Խաչատրյանի «Introlude» և Արսեն Հարությունի «Փաղեր» (դաշնակահար՝ Անահիտ Դիլբարյան) ստեղծագործությունները, որոնք հայ ունկնդրին ներկայացվեցին առաջին անգամ։

Համերգը վարեց երաժշտագետ Նարինե Ավետիսյանը։

Խմբագրական

ՀՀ ԳԱՄ-ում տեղի է ունեցել «Սերգեյ Փարաջանով – 100» միջազգային գիտաժողովը



«Սերգեյ Փարաջանով – 100» խորագրով եռօրյա միջազգային գիտաժողովը ՀՀ ԳԱՄ-ում

Սեպտեմբերի 10-12-ը, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Սերգեյ Փարաջանով-100» խորագրով եռօրյա միջազգային գիտաժողովը։ Այն կազմակերպել է ՀՀ ԳԱՄ Արվեստի ինստիտուտը՝ Սերգեյ Փարաջանովի թանգարանի հետ համատեղ։ «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան։

Գիտաժողովը գումարվել էր Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակին նվիրված հորեղյանական միջոցառումների անցկացման համար ստեղծված կառավարական հորեղյանական հանձնաժողովի որոշմամբ՝ ՀՀ կրթության, գիտության, մշա-

կույթի և սպորտի նախարարության աջակցությամբ։

Գիտաժողովի նպատակն էր ներկայացնել միջազգային փարաջանովագիտության արդի փուլը, քննության առնել հայ նշանավոր կինոռեժիսորի ստեղծագործական գործունեությունը, արժեքները նրա թողած ժառանգությունը, բացահայտել Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության դերն ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային կինոարվեստում։

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցել են միջազգային ճանաչում ունեցող առաջատար գիտնականներ և երիտասարդ հետազոտողներ ԱՄՆ-ից, Բալանիայից, Իտալիայից, Լեհաստանից, Հայաստանից, Ղազախստանից, Պորտուգալիայից, Ռու-

սաստանից, Սերբիայից, Վրաստանից, Ուկրաինայից, Ֆրանսիայից։

Գիտաժողովի մասնակիցներին ողջունել է ՀՀ ԳԱՄ Արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը։ «Մյսօր նշանավոր օր է ՀՀ ԳԱՄ Արվեստի ինստիտուտի տարեգրության մեջ, քանի որ ակադեմիական արվեստագիտության մեջ առաջին անգամ կազմակերպվում է նման ներկայացուցչական ու մասշտաբային գիտաժողով։ 21-րդ դարի Հայաստանում փարաջանովագիտության ակունքներում կանգնած է հենց ՀՀ ԳԱՄ Արվեստի ինստիտուտը։ Մյս առիթով ուզում եմ հիշել տաղանդավոր կինոգեղ, ՀԱՄՆ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱՄ Արվեստի ինստիտուտի Հեռուստատեսության և կինոյի բաժնի վարիչ, արվեստագիտության թեկնածու երջանկահիշատակ Կարեն Քալանթարին։ Փարաջանովագիտության մեջ Փարաջանովի և Քալանթարի անուններն ասես միասին լինում են, քանի որ վերջինիս կինոգիտական հետաքրքրությունների առանցքում է հարաբերությունները Փարաջանովի արվեստի ուսումնասիրությունը։ 1998 թ. ՀՀ ԳԱՄ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրապարակվեց Քալանթարի «Օչերկս օ Սերգեյ Փարաջանով» հիմնարար մենագրությունը, որը դարձավ Կարեն Քալանթարի կարապի երգը։ Մշակութային կյանքում Սուրեն Համբարձումյանի կողմից ընթացող միջազգային «Կինոգիտության մարզարիթ»։ Մյս դարձավ կարևոր հանգրվան միջազգային փարաջանովագիտության ասպարեզում և հուսալի հիմք՝ հետագա ուսումնասիրությունների համար։ Հետագայում ես ու մինչ օրս Փարաջանովի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրությունը մրջապակե եղել է Արվեստի ինստիտուտի կինոգիտական հետաքրքրությունների կենտրոնում։ Վրասահ եմ, որ մեր միջազգային գիտաժողովի արդյունքները կդառնան կարևոր հանգրվան արվեստագիտության ասպարեզում և նոր խոսք՝ փարաջանովագիտության մեջ», – ասել է Աննա Ասատրյանը։

Սերգեյ Փարաջանովի ստեղծագործական ժառանգությունը արժեքավոր է ՀՀ ԳԱՄ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը։ «Հաջալի նախաձեռնություն է այսպիսի գիտաժողովի հրավիրումը, որովհետև Փարաջանովն աշխարհահռ-

անպարման արժեքներ, սրբոճել նախադրյալներ՝ շարունակելու և զարգացնելու նրա գործը և հայ կինոարվեստը բարձրացնելու նոր բարձունքները», – ասել է ակադեմիկոս Յուրի Սուվարյանը։

«Փարաջանովյան կերպարն ինձ համար Նոբելյան մրցանակի կերպար է», – նշել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը։ «Անցյալ տարի ՅՈՒՆԵՍԿՕ-ն որոշում ընդունեց Շառլ Ազնավուրի և Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյա հորեղյանները Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների հորեղյանների 2024-2025 թվականներին օրացույցում ընդգրկելու վերաբերյալ։ Կառավարական հանձնաժողովը հավաքագրեց հայրերը և նախաձեռնեց փարաջանովյան տարվա կազմակերպումը։ Նախարարությունն առաջարկել էր դուրս գալ ավանդական դարձած հուշ երևույթների և նորովի ներկայացնել մեր մրավորականներին, մեր հերոսներին, ներկայացնել այն, ինչը չենք տեսել, ինչն ակնհայտ է։ Հայրերից ընտրվեցին նրանք, որոնք յուրովի են ներկայացնում Փարաջանովին, և մենք հասկացանք՝ ինչքան մեծ և բազմաշերտ է Փարաջանովի թողած ժառանգությունը։ Այսօր պարզ էր գիտական խոսք և ասելիք։ Փարաջանովն իր սրբոճածով ավելին է, քան մշակույթ, և հենց դրա հիմնավորումներն են ապավում այս գիտաժողովի ընթացքում։ Փարաջանովյան կերպարն ինձ համար Նոբելյան մրցանակի կերպար է», – ընդգծել է Դանիել Դանիելյանը։

Սերգեյ Փարաջանովի թանգարանի տնօրեն Անահիտ Միքայելյանը նշել է, որ թանգարանն իր 33 տարիների ընթացքում աշխարհին ներկայացրել է Փարաջանով արվեստագետին և շատ հետազոտողների համար դարձել օջախ։ «Մյսօր արվեստագետ հասարակությունը հնարավորություն կունենա գիտաժողովի մասնակիցներից լսելու իրենց հուշերը, իրենց խոսքը Սերգեյ Փարաջանովի վերաբերյալ։ Մա առաջին այսպիսի մասշտաբային գիտաժողովն է՝ նվիրված Փարաջանովին, և ես ցանկանում եմ, որ այն լինի շարունակական», – ասել է Անահիտ Միքայելյանը։

Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի ղեկավար Սառա Նալբանդյանն ընդգծել է. «Սերգեյ Փարաջանովը հերիտադարյան կինոյի համարական անալոգներում ամենատաղանդավոր և ամենաճանաչված ռեժիսորներից է, միևնույն ժամանակ, անընդհատ կարիք կա անդադարապես նրա աշխարհային, քանի որ չար քողարկված մշակութային կողմ էր, վառ միզուկ շարք, լեզու, որը դեռևս բացահայտման կարիք ունի»։

Գիտաժողովի ընթացքում տեղի են ունեցել «Tribute to Sergei Parajanov. On the centenary of his birth» հոդվածների ժողովածուի (խմբագիր՝ պրոֆեսոր Մարեկ Սոկոլովսկի, Պոզնան (Լեհաստան), 2024) և հայ ակադավոր կինոգետ Կարեն Քալանթարի «Օչերկս օ Սերգեյ Փարաջանով» աշխատության 2-րդ հրատարակության (Մանկտ Պետերբուրգ (Ռուսաստան), 2023), պրոֆեսոր Սուսաննա Դավթյանի «Տոն, որ միշտ քեզ հետ է» եռակեզով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, աշխատության (Երեվան, 2024) շնորհանդեսները։

<https://armenpress.am/hy/article/1199706>

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան նաև ԵՊԿ ղեկավարի պաշտոնակատար, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ծովինար Սուվարյանը («Մասունքի Դավիթ» օպերա-բալետի անհայտ լիրետոն» թեմայով) և արվեստագիտության դոկտոր, ԵՊԿ երաժշտության տեսության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սվետլանա Մարգարյանը («Սերգեյ Փարաջանովի գաղափարների հետազոծություն» թեմայով)։

Խմբագրական

«Երգող Արցախի» ձայնը (Վերբերն ապարինելու ժամանակը)

Կոմիտասի թանգարան-ինստիտուտի համերգարանում օրերս կայացավ արեգահար, խմբավար, Արցախի և Բեյրութի մշակութային կյանքում երևելի դերակատարություն ստանձնած, ներկայումս՝ Համազգային հայ կրթական և մշակութային միության Լիբանանի կենտրոնական վարչության ատենապետ Զաքար Քեշիշյանի մենահամերգը։ Զաքար Քեշիշյանն Այնճարի ծնունդ է, հասակ է առել Լիբանանում, շվիսահար է ու խմբավար, դեռ 80-ականների վերջին վերականգնել ու ղեկավարել է Այնճարի «Կաթավիկ» մանկապատանեկան երգչախումբը, 1992-ին հիմնել լիբանանահայ Ազգ. վարժարանների «Ծիածան» երգչախումբը, 1997-ից ի վեր գեղարվեստական ղեկավարն է Լիբանանի Համազգայինի «Կարկաս» և 2006-ից՝ Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախմբերի։ Իբրև շվիսահար հանդես է եկել «Գորանի», «Կոմիտաս», «Նոր երգ» երաժշտախմբերի կազմում, դասախոսել Լիբանանի պետական երաժշտանոցում, «Ք. Կանայան» երաժշտական բոլեջում, լիբանանյան Հայկազյան համալսարանում։ Պարզևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» նախագահական շքանշանով, արժանացել «Եղիշե» համահայկական մշակութային մրցանակին, 2004-ից Արցախի պատվո քաղաքացին է։



Զաքար Քեշիշյան

«Սյուր ուղեցի հարազատ մարդկանց հավաքել Կոմիտասի փան մեջ», – 2024-ի օգոստոսյան համերգի ներկաներին դիմելով՝ նա իր խոսքում առաջնահերթ հիշեց «բոլոր նրանց, որոնք անցյալ ավելի քան երեսնամյակին գերազույն գոհողությամբ» հավերժացան հանուն Հայրենիքի։ Նաղեժող Հակոբյանի դաշնամուրային նվագակցությամբ Զաքար Քեշիշյանը շվիով և դուդուկով կատարեց հայ ժողովրդական եղանակների մշակումներ և շվիի համար փոխադրումներ, ինչպես նաև՝ հայ կոմպոզիտորների՝ Գրիգոր Եղիազարյանի, Անտ Բաբաջանյանի, Խաչատուր Ավետիսյանի, Գեորգ Մանասյանի, Ռոբերտ Պետրոսյանի և այլոց ստեղծագործությունները։ Տպավորիչ էին «Վեռնականների պար»-ի, Մ. Մավիսակալյանի մշակմամբ Սայաթ-Նովայի, Գեորգ Մանասյանի «Էրգրումի շորոր»-ի և «Տոնական նախերգանք»-ի, Խ. Ավետիսյանի «Տաղ հայտնության» կատարումները։ Հատկապես կառնածնացնեի Ռ. Պետրոսյանի՝ շվիի և դաշնամուրի համար գրված Կոնցերտը, որ կոմպոզիտորը հեղինակել է 1990-ականների սկզբին՝ հատուկ Զաքար Քեշիշյանի առաջարկով՝ բեյրութահայ շվիսահարի կոնսերվատորիական ավարտական քննությանը կատարելու համար։ «Ժնձի վիճակուեցալ քննաթիւն-համերգէս առաջ Բոնելթթօն կարարել Հայաստանի երաժշտահաններու և երաժշտագէտներու Միութեան կազմակերպած՝ նոր ստեղծագործութիւններ ներկայացնելու կայա-համերգին, որ ամբողջ դակիճը լեցուած էր քաջա-ռապէս վաերական ու արհեստավարժ երաժշտական դէմքերով, որոնց առջեւ պէտք էր նուագէի... և նուագեցի երիտասարդական ախնով ու ոգեւորութեամբ...», – հանդիսականին իր հուշերը պատմեց Զաքար Քեշիշյանը։ Պատահական էր, թե՛ ոչ, բայց այս գործը դարձյալ հինգ 2024-ի օգոստոսի 28-ին՝ կոմպոզիտորի ծննդյան օրը, մարդու, որ չորս տասնյակից ավելի մանկական երգեր է գրել Բեյրութի «Կարկաս» և Շուշիի «Վարանդա» երգչախմբերի համար։

Վարանդա անունը լոկ հայոց գավառներից մեկի անվանումն էր այնքան ժամանակ, քանի դեռ մի խանդավառ երիտասարդ չէր եկել Արցախ աշխարհ ու պատերազմի հետևանքների ծանրության տակ դեռևս կրած Շուշիում չէր հիմնել «Վարանդա» երգչախումբը։ Կոմիտասի անվ. երաժշտանոցի ուսանողն այնտեղ էր ոչ միայն ծանոթանալու Արցախ աշխարհին բաժին հասած աշխարհագրական գեղատեսիլ միջավայրը, որ լեռնաշղթաներով շրջապատված, բերդի տեսք ուներ։ Եկավ այն ժամանակ, երբ հերթական անգամ, Առյուծ խոսքերով, «*Ախաճող ազգերի ահավոր հորձանքներ*» գալիս, ընդհարվում էին Ղարաբաղի լեռնաստանին, փշրվում ու հետ դառնում։

1992-ն էր. լիբանանահայ երաժիշտ Զաքար Քեշիշյանը ստեղծեց պատերազմից ավերակված, բայց կյանքով շնչող Շուշիում «Վարանդա» մանկապատանեկան ու երիտասարդական երգչախումբը, որ գործում էր Արամ Մանուկյանի անվան վարժարանում։ Հետագայում նրան տրվեց պետական կարգավիճակ, իսկ երգչախումբն իր ստեղծագործական կյանքը շարունակեց երեք՝ մանկական, պատանեկան և երիտասարդական կազմերով։ Արցախը, Շուշին ու ազատության թարմ շնչի հետ ծնունդ

առած «Վարանդան» Զաքարի համար դարձան սեր՝ ողջ կյանքի համար։ Երգչախմբի հիմնադրմամբ նաև սկիզբ դրվեց կրթական ու մշակութային վաղեմի ավանդույթներ ունեցող քաղաքի հոգևոր վերածննդին։ Երաժիշտը հաջորդ բոլոր երեսուն տարիներին եղավ հավատարիմ և հետևողական իր ծառայության մեջ, սերունդներ աճեցրեց, ծանրակշիռ ներդրում ունեցավ Արցախի մշակութային կյանքն աշխուժացնելու՝ իր նպատակն իրագործելու գործում։ Իր խոսքերով, ներշնչվել էր քաղաքի մթնոլորտով, համակվել նրա էներգիայով և անվերջ վերադարձի մեջ էր, քանի որ չէր կարողանում պոկվել տեղի բնությունից, մարդկանցից, մտավորականությունից։ «*Հայար եմ, որ մեկ մասնիկն եմ դարձել այս երկրի, – հարցազրույցներից մեկում ասել էր Զաքար Քեշիշյանը, – որ Շուշիի գուսապարկերի մեջ իմ ներկն ունեմ*»։

Իրոք, երաժշտի բերած երաժշտական «գուներանգները» բազմաբղետ էին. նրա ղեկավարությամբ կատարվեցին 300-ից ավելի բազմաժանր ստեղծագործություններ (դասական, ժամանակակից, նաև օտարալեզու գործեր), որոնցից շուրջ 150-ը՝ նոր գրված։ «Վարանդայի» տված համերգները հաշվվում էին հայրուրներով. նրան լսել են Արցախի և Հայաստանի տարբեր բնակավայրերում, գորամասերում, կրթօջախներում, նաև հյուրախաղերով երգչական կազմը եղել է Լիբանանում։ Երգչախումբը հատուկ երգացանկով հանդես է եկել Մոցարտի, Շուբերտի հորեյլանների առթիվ, թողարկել խոսասյուի, «Վարանդայի» անցած ստեղծագործական ուղու մասին նկարահանվել են վավերագրական ֆիլմեր։

«Դժվարին ժամանակներում հիմնադրված «Վարանդան» նպարակ ուներ երգի միջոցով ժողովրդի մեջ նոր կյանք, ժպիտ և ոգևորություն առաջացնելու, – սա մեջբերում է Զ. Քեշիշյանի խոսքից, որ ասել է «Վարանդա»-յի և Լիբանանի «Այգ» երիտասարդական երգչախմբերի՝ 2016 թ. օգոստոսի 6-ին՝ ապրիլյան քառօրյա պատերազմից ընդամենը մի քանի ամիս անց երևանում կայացած միացյալ համերգից առաջ։ – Եվս մի առիթ. իսկ հիմա պետք է արցունք չորացնել»։

Զաքար Քեշիշյանն անկոտրում է։ Այժմ Հայաստանում է՝ արցախցի մանկանց ձայներով դարձյալ «արցունք չորացնելու» և վերբերն ապարինելու համար։ Նրա կոչով և ջանքերով կարճ ընթացքում միախմբվել են Արցախից տեղահանված իր սաները և 80 հոգանոց կազմով պատրաստվում են «Երգող Արցախ» երգչախմբային համերգին, որը կկայանա սեպտեմբերի 13-ին, Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը։

ՀԱՄՈՒԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Գրող

Համերգ նվիրված Նարեկացի արվեստի միության 20-ամյակին

2024 թվականի սեպտեմբերի 5-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը նշվեց Նարեկացի Արվեստի Միության (ՆԱՄ) մշակութային առաքելության ու գործունեության 20-ամյակը։

Հանդիսավոր համերգին իր ողջույնի խոսքում Միության հիմնադիր Նարեկ Հարությունյանը շնորհակալություն հայտնեց բոլորին, ովքեր 20 երկար ու ձիգ տարիներ միության կողքին են եղել, ում միջոցով կյանքի են կոչվել բազմաթիվ կարևոր մշակութային ծրագրեր։ Միջոցառման ավարտին Նարեկ Հարությունյանը խորհրդանշական խաչքարեր նվիրեց Վահան Արծրունուն, Ջոն Հոդյանին, «Փարոս» կամերային երգչախմբին, «Նարեկացի» նվագախմբի գեղարվեստական ղեկավար Արտեմ Խաչատուրին,



«Փարոս» կամերային երգչախումբ, գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Բաֆֆի Միքայելյան



Վահան Արծրունի, Նարեկ Հարությունյան

«Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլի գեղարվեստական ղեկավար Հեյրետ Ասատրյանին, պարուհի, իրավաբան Մարիաննա Պողոսյանին։

ՆԱՄ հիմնադիրը նվերներ հանձնեց նաև ՀՀ-ում Շվեյցարիայի արտակարգ և լիազոր Դեսպան Լուկաս Ռոզենկրանցին, ՀՀ-ում Ռումինիայի արտակարգ և լիազոր Դեսպան Կորնել Իոնեսկուն և ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության ներկայացուցիչ Ֆրանկ Հեսսին, որոնք իրենց ներկայությամբ պատվել էին ՆԱՄ 20-ամյակին նվիրված միջոցառումը։

Համերգային ծրագրում հնչեցին հատվածներ Վահան Արծրունու «Կոմիտաս Տաղ հայտնություն» երգաշարից, հատվածներ «Նաղաշ» անսամբլի «Կարոտի երգեր» շարքից (խոսք՝ Մկրտիչ Նաղաշի, երաժշտությունը՝ Ջոն Հոդյանի)։ Միջազգային մրցույթների դափնեկիր «Փարոս» կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Բաֆֆի Միքայելյան, խմբավար՝ Ռուբեն Կարանսֆերյան), «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ Հեյրետ Ասատրյան) և «Նարեկացի» նվագախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Արտեմ Խաչատուր) կատարեցին հոգևոր և ժողովրդական ստեղծագործություններ։ Մենակատարներն էին Քնար Հարությունյանը, Նովա Հարությունյանը, Լուսին Վանեթը, Սմբատ Խալաթյանը, Հարություն Մուրադյանը։ Անակնկալ երաժշտական կատարմամբ հանդես եկավ Մարիաննա Պողոսյանը։ Ներկաները հնարավորություն ունեցան վայելելու «Նարեկացի» արվեստի միության 20-ամյակին նվիրված հոլովակը։

Ցուցահանդեսի շրջանակում ներկայացվեցին հայ նշանավոր գեղանկարիչներ և քանդակագործներ Արտո Չաքմաքչյանի, Հակոբ Հակոբյանի, Ռոբերտ Էլիբեկյանի, Տիգրան Մատույանի, Արմեն Խոջոյանի, Ռոբերտ Ասկար-



«Նարեկացի» արվեստի միության «Քնար» հոգևոր և ժողովրդական երգերի խումբ, գեղարվեստական ղեկավար՝ Լուսին Վանես

յանի և Սամվել Թավադյանի աշխատանքները։ Ցուցադրվեցին նաև «Նարեկացի» արվեստի միության հիմնադիր Նարեկ Հարությունյանի լուսանկարչական աշխատանքները։

Համերգային ծրագրի ավարտին հնչեց Սմբատ Խալաթյանի «Ջոն» ստեղծագործությունը՝ նվիրված «Նարեկացի» արվեստի միության 20-ամյակին։

«Նարեկացի» արվեստի միությունը (ՆԱՄ) բարեգոր-

ծական հիմունքներով գործող և շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է։ Կրելով սուրբ Գրիգոր Նարեկացու անունը և առաջնորդվելով հոգևորի խորհրդով՝ միությունը կոչված է ծառայելու հայ արվեստին, մշակույթին և հոգևոր արժեքներին։

Պարասարկե՝
ԱՐՄԻՆԵ ԱՐՑԱՐԸ

<https://hy.armradio.am/archives/601366>

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»



Հայկ Մարտիրոսյան, Էվա Կիրիսմայեր Բիլի, Լիլիթ Մարտիրոսյան

կատարողների հյուրախաղեր, դասախոսություններ, մասնակցություն հայ երաժշտությանը նվիրված փառատոներին, տարբեր նախագծերին և այլն:

Ակադեմիայի Միջազգային համագործակցության ղեկավար Էմա Պրոտ Շեպեցի հետ Երևանյան հանդիպումները, պրոֆեսորներ՝ դաշնակահար Ռուբեն Դալիբալայանի, ջութակահար Լեոնիդ Սորոկովի վարպետության դասերը շարունակական են դարձնում այս համագործակցությունը: Առանձնահատուկ է կրթօջախի պրոֆեսոր դաշնակահար, կոնցերտմայստեր Էվա Կիրիսմայեր Բիլիի երաժշտաստարակական անօրինակ գործունեությունը՝ կատարողական, մանկավարժական, գիտական ամենայնօրե կապեր ստեղծելով հայ-խորվաթական մշակութային համայնապատկերում: 2024-2025 ուսումնական տարում «Էրազմուս» շարժումության ծրագրին դիմել են և ընտրվել Լարային գործիքների ամբիոնի պրոֆեսոր Արմեն Հարությունյանի մասնագիտական դասարանի 2-րդ կուրսի ջութակահար Հայկ Մարտիրոսյանը և Մասնագիտական դաշնամուրի ամբիոնի պրոֆեսոր Վաղարշակ Հարությունյանի մասնագիտական դասարանի 3-րդ կուրսի ուսանող Լիլիթ Մարտիրոսյանը: Նրանք մեկ ուսումնական տարի կսովորեն Զագրեբի երաժշտական ակադեմիայում: Մասնագիտական դասերը կանցնեն Լարային գործիքների ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Իվան Նովիցի և պրոֆեսոր Ռուբեն Դալիբալայանի ղեկավարությամբ:

Սեպտեմբերի 24-ին ԵՊԿ ուսանողներին Զագրեբի օդանավակայանում պաշտոնապես դիմավորեց Զագրեբի երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր՝ Էվա Կիրիսմայեր Բիլիչը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՆՅՈՒՂԱՐՁԸ ԵՊԿ ԳՅՈՒՄՐԻԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ

Ճ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի լարային քառյակը ելույթ ունեցավ Եվրոպական ժառանգության օրեր ծրագրի շրջանակներում՝ Գյումրիի ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանում:



ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի լարային քառյակը

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի 3-րդ կուրսի ուսանող Ռաֆիկ Խաչատրյանին (դասախոս՝ դոցենտ Լուսինե Կոչյան)



Լուսինե Կոչյան, Ռաֆիկ Խաչատրյան

Կոչյան)՝ Լեհաստանի Չեխո-ժինեկ քաղաքում կայացած «Vistula Sounds» 3-րդ միջազգային վոկալ փառատոն-մրցույթում, որպես ջագային երգիչ Մեծ մրցանակի արժանանալու համար: Նա սկզբում հաղթել է իր տարիքային խմբի մրցույթում և ապա՝ բոլոր տարիքային խմբերի հաղթողների մեջ ճանաչվել է լավագույնը:

Ռ. Խաչատրյանը ստացել է երկու մրցանակ. 17-21 տարեկան տարիքային խմբի անվանակարգում 1-ին մրցանակ և մրցույթ-փառատոնի Գրան Պրին: Նրա կատարումը հնչել է Գալա համերգին: Մրցույթ-փառատոնի եզրափակիչ երեկոյին երգել է նաև մրցանակակրի ղեկավարը, հրավիրված երգչուհի՝ Լուսինե Կոչյանը:

ՎԱՀԱԳՆ ՍՏԱՄԲՈԼՅԱՆԻ ՄՆՎԱՆ ԵՐԳԵՀՈՆԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ – 2024

Հայաստանի բազմաժանր երաժշտական կյանքում իր ուրույն տեղն ու լսարանն ունի երգեհոնային երաժշտությունը: Դրա վկայությունն են հանրահայտ հայազգի երգեհոնահարներն ու բազմաթիվ երգեհոնների առկայությունը Երևանում և Հայաստանի այլ քաղաքներում՝ էջ-միածին, Զարենցավան, Կապան, Գյումրի: Իհարկե այդ ամենը՝ նախ և առաջ, հայկական երգեհոնային դպրոցի նահապետ Վահագն Ստամբոլյանի ջանքերի շնորհիվ:



ՎԱՍԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

2022 թ. Կամերային երաժշտության ազգային կենտրոնը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ իրականացրեց Վահագն Ստամբոլյանի անվ. երգեհոնային երաժշտության առաջին միջազգային փառատոնը: Հնչեցին, ինչպես դասական երգեհոնային, այնպես էլ հայկական երաժշտական գոհարների երգեհոնային մշակումներ և հայ հեղինակների երգեհոնային ստեղծագործություններ:

Արտերկրից փառատոնին մասնակցեցին՝ Ֆաբիո Մաչեան (Իտալիա), Լադա Լաբգինյան (Ռուսաստան), Կոնստանտին Վոլոստով (Ռուսաստան), Ժան-Պիեռ Սթեյվերս (Նիդերլանդներ), Եվգենի Ավրամենկո (Ռուսաստան): Վերջին երկու երգեհոնահարները համերգներով հանդես եկան նաև Զարենցավանում ու Կապանում:

2024 թ., Վահագն Ստամբոլյանի անվան երգեհոնային երաժշտության 2-րդ միջազգային փառատոնին արտերկրից կմասնակցեն՝ Ջոշն Շուրմանը (Նիդերլանդներ), Լուիզենիո Մարիա Ֆաջանին (Իտալիա), Մավառոնե Պրոնեստին (Իտալիա), Նարինե Սիմոնյանը (Ֆրանսիա), Փիլիպ Բլայնը (Գերմանիա):

Հայկական երգեհոնային դպրոցը կներկայացնեն՝ Աննա Բակունցը, Կարինե Հովհաննիսյանը, Հարություն Թազվորյանը, Թերեզա Ոսկանյանը, Հովհաննես Մանուկյանը, Արմեն Աղաջանյանը, Դավիթ Հովհաննիսյանը, Լուսին Մառաշյանը, Լուսինե Հարությունյանը, Վահագն Մարգարյանը, Մարինա Նահապետյանը, Արփինե Հարությունյանը և այլք:

Փառատոնային համերգները կանցկացվեն Երևանում, Կապանում, Զարենցավանում և Գյումրիում: Իրականացվելու են նաև համերգներ՝ նվիրված Կոմիտասին և Ավետ Տերտերյանին:

Վահագն Ստամբոլյանի անվ. երգեհոնային երաժշտության միջազգային 2-րդ փառատոնի բացման համերգը՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 155-ամյակին, տեղի ունեցավ սեպտեմբերի 25-ին, Կամերային երաժշտության տանը: Մասնակցեցին երգեհոնահարներ՝ Հարություն Թազվորյանը, Թերեզա Ոսկանյանը, Արմեն Աղաջանյանը, Աննա Բակունցը, Կարինե Հովհաննիսյանը, Լուսինե Հարությունյանը, Արփինե Հարությունյանը: Ծրագրում ընդգրկված էին Կոմիտասի ստեղծագործությունների երգեհոնային մշակումները՝ «Ամեն Հայր սուրբ», «Հրաշափառ Աստուած», «Հոգնություն մեզ ժամանեա, կարող Տեր», «Սուրբ-Սուրբ» (Քեռիկյան Պատարագից), «Յայս Յայրկ», «Ով է որպես», «Ով զարմանալի», «Ժողովուրդ խորին», «Տեր, կեցո Դու զՀայս», «Մեծացուսցե անձն իմ, ըզՏեր», «Առավոտ Լուսո», «Գովա երուսաղեն», «Սիրտ իմ սասանի», «Տեր ողորմեա», «Հայրապետական մաղանք», «Մոկաց Միրզա», «Շուշիկի», «Օրոր», «Ես աղջիկ եմ», «Տուն արի», «Գութանը հաց եմ

Հարություն Թազվորյան



Աննա Բակունց



բերում», «Լուսնակը սարի տակին», «Երկնից գետնից»:

Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՍԻ ՄՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՍԵՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03ԱՅ59505 տրված 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԼԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ, ԳՈՀԱՐ ՀԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՀԱՐ ՀԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԳՈՀԱՐ ՀԱԳՈՅԱՆ (հայ. լեզու)
ՍՈՖԻԱ ԱՋԼԱՆՈՒԹՅԱՆ (ռուս. լեզու)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսագրի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:
Ծավալը 8 էջ: Ստորագրված է 28.09.2024:
Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93-118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am, http://yksclabrary.am/
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-
Yerevan-State-Conservatory-996490150508242

